



GNC alfa

«ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ


Բովանդակություն

- «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ առաքելությունը
- «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ փոխկապակցումները տարածաշրջանային ցանցերի և Ինտերնետի մատակարարների հետ
- Ինտերնետի շուկան և աճի հեռանկարները
- «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ ցանցի տոպոլոգիան
- Տեխնոլոգիան և ծառայությունները
- Մասնակցություն ազգային ծրագրերին՝ որպես SՆՏ ենթակառուցվածքի հիմնական մատակարար
- Էլ.-Կրթության դպրոցների ՎՄՑ փորձնական ծրագիր
- Էլ.-Առողջապահության / Հեռաբժշկության ՎՄՑ փորձնական ծրագիր
- Մեր հիմնական գործընկերները

«ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ առաքելությունը

- «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ հիմնադրվել է 2007 թվականին:
- Համապետական ծածկույթով հեռահաղորդակցության հիմնացանց, որը նախագծված է բավարարելու միջազգային և տրանզիտային ընկերությունների, տեղական ֆիքսված և բջջային կապի օպերատորների, Ինտերնետ ծառայություններ մատուցողների և խոշոր ձեռնարկությունների տրանսմիսիոն կապուղիների և արագագործ Ինտերնետ ծառայությունների աճող պահանջարկը:


«ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ փոխկապակցումները տարածաշրջանային ցանցերի և Ինտերնետի մատակարարների հետ



- Ռոստելեկոմը և TIC-ն (Իրան)՝ հարավում:
- Կոջենտը հարավ-արևելքում, Caucasus ցանցը Վրաստանում (վարդագույն գիծը) և Caucasus անդրծովյան մալուխը (վարդագույն գիծը):
- Level 3-ը հյուսիս-արևելքում, Caucasus ցանցը Վրաստանում (վարդագույն գիծը) և Caucasus անդրծովյան մալուխը (վարդագույն գիծը):
- Ռոստելեկոմը (Մոսկվա) հյուսիս-արևմտյան սեգմենտում, Fortnet-ը Վրաստանում (կապույտ գիծը), Վրաստան-Ռուսաստան անդրծովյան մալուխը (նարնջագույն գիծը) և Ռոստելեկոմի ցամաքային ցանցը (շագանակագույն գիծը):

Ինտերնետի շուկան և աճի հեռանկարները

- «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ ցանցի կումերցիոն շահագործման արդյունքում տեղի ունեցավ շուկայի կառուցվածքի հիմնարար փոփոխություն, որը հանգեցրեց Ինտերնետի մեծածախ գների նվազեցմանը:
- Ինտերնետի իմացության և օգտագործման աճը, լայնաշերտ WiMax, ADSL+, FTTH, 3G+ ծառայությունների ներդրումը նպաստում են կապի ծառայությունների, հասանելիության վերջին մղոնի լուծումների և հավելյալ արժեքի ծառայությունների ավելի արագ տարածմանը:
- Համապետական ծածկույթով հիմնացանցի ստեղծումը Կառավարության և հեռահաղորդակցության օպերատորների օրակարգային խնդիրն է:
- Ինտերնետի շուկան արագորեն աճում է (տարեկան մոտ 100% ծավալով): Ընդհանուր օգտագործման ծավալը կանխատեսվում է, որ 2011 թվականին կկազմի 8 Գբ/վ:
- Շուկայի կենտրոնացումը Երևանում մարտահրավեր է մարզային զարգացումների համար: «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ ծավալուն ներդրումներ է իրականացնում մարզերում հասանելիության ցանցեր կառուցելու համար:
- Ազգային ծրագրերի իրականացումը (Էլ.-Կառավարություն, Էլ.-Կրթություն, Էլ.-Առողջապահություն / Հեռաբժշկություն և այլն) նոր հնարավորություններ են ստեղծել աճի, տեխնոլոգիական նորարարությունների և ներթափանցման աճի համար:
- Հայկական Ինտերնետի փոխկապակցման կենտրոնի (ARMIX) ստեղծումը կնպաստի .am zone-ի կայացմանը, կբարելավի հասանելիությունը տեղեկատվական ռեսուրսներին, կավելացնի Ինտերնետի տրաֆիկը և օգտագործման ծավալը:




«ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ ցանցի տոպոլոգիան

Միակ այլընտրանքը ազգային օպերատորի գոյություն ունեցող օպտիկամանրաթելային ցանցին: Փոխկապակցումներ են կատարվել միջազգային տրանզիտային օպերատորների հետ Իրանում և Վրաստանում, այդպիսով Հայաստանի Ինտերնետի սնուցման տեսակետից «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ ցանցն ապահովվել և սնուցման բազմակի աղբյուրներով:

Փաստորեն, «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ ցանցը Հայաստանի հեռահաղորդակցության միակ գերժամանակակից ենթակառուցվածքն է օժտված 3 միջազգային կապուղիներով. մեկը՝ հարավում, և երկուսը՝ հյուսիսում:

«ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ ցանցի ընդարձակման պլանը ներառում է 2011 թվականի ընթացքում Հայաստանի 33 հիմնական քաղաքների և համայնքների համակցում:



Տեխնոլոգիան և ծառայությունները

- Օպերատորական դասի և համապետական ծածկույթով SDH (Cisco-ի սարքավորումների հիման վրա) և Juniper Networks ընկերության IP/MPLS տեխնոլոգիական հենքով օժտված հեռահաղորդակցության հիմնացանց:
- Տրանսմիսիոն հզորությունը՝ 10 Գբ/վ, օպերատորական մակարդակի Ethernet արձանագրությամբ:
- Հասանելիության տեխնոլոգիան հիմնված է FTTx-ի (մանրաթելը դեպի տուն/գրասենյակ) վրա:

«ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ ծառայությունների փաթեթը ներառում է.

IP/MPLS հենքով տվյալների հաղորդման ծառայություններ

- OSI երկրորդ մակարդակում. Վիրտուալ վարձակալված գիծ (VPWS/VLL), Վիրտուալ մասնավոր լոկալ ցանցի տեղակայման ծառայություն (VPLS),
- OSI երրորդ մակարդակում. Վիրտուալ մասնավոր ուղղորդվող ցանցերի ծառայություն (VPRN):



Ինտերնետ ծառայություններ

- Մեծածախ Ինտերնետ (IP տարանցման) ծառայություն,
- Ինտերնետ հասանելիության ծառայություններ,
- Միջազգային վարձակալված գծերի ծառայություններ,
- IP տարանցման ժամանակավոր ծառայություն:



Մասնակցությունն ազգային ծրագրերին՝ որպես ՏՀՏ ենթակառուցվածքի հիմնական մատակարար


Էլ-Կառավարություն




Էլ-Կրթություն



Էլ-Առողջապահություն



ԷԼ.-Կրթության դպրոցների ՎՄՑ փորձնական ծրագիր



Վանաձոր՝ Տիգրան Մեծ փող. 21, Դպրոց 4
 Սպիտակ՝ Շահումյան փ. 5, Քաղաքապետարան, Դպրոց 3
 Երևան՝ Ա. Խաչատրյան փող., Դպրոց 132
 Ագարակ՝ Չարենց փող. 1 (քաղաքի միակ դպրոցը)
 Սպարան՝ Մարշալ Բաղդամյան 2-րդ փող., շենք 1, Դպրոց 2
 ՉԻՀ-ում Microsoft ինովացիոն կենտրոն, Ն. Էմին փող. 123

ՉԻՀ-ում Սպարանում ընտրվել է որպես փորձնական ծրագրի մեկնարկի ցուցասրահ: Ծրագրի գործընկերներ ՉԻՀ-ը և Microsoft Հայաստանը կկազմակերպեն ծրագրին մասնակցող դպրոցների մասնագետների համար MLG կիրառման հատուկ ուսուցում:

ԷԼ.-Առողջապահության / Հեռաբժշկության ՎՄՑ փորձնական ծրագիր

- Հայաստանի Հեռաբժշկության ասոցիացիայի այս ծրագիրը Կառավարության ԷԼ.-Առողջապահության ծրագրի մաս է կազմում:
- «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ IP/MPLS ցանցն ընտրվել է որպես տրանսմիսիոն հիմնական ենթակառուցվածք:
- Փորձնական ՎՄՑ-ին միացվել են Ջրաշեն գյուղի բուժամբուլատորիան և Հեռաբժշկության ասոցիացիան՝ Երևանում:
- ՎՄՑ-ն բժիշկներին on-line ռեժիմում բժշկական կիրառությունների հնարավորություն է ընձեռում, որպեսզի բուժման խորհրդատվություն ստանալու նպատակով հեռվից ուղարկեն հետազոտվող հիվանդի 7 դիագնոստիկ պարամետրեր՝ օգտագործելով հատուկ բժշկական սարքեր ու ծրագրեր:



Մեր հիմնական գործընկերները



Շնորհակալություն

«ԶիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ
Խաղաղության փող. 1, 2201 Աբովյան, ՀՀ
Հեռ. +374 10-594149
Էլ.-փոստ. info@gnc.am
URL: www.gnc.am

